ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2021-2-3-Ա

ք. Երևան 21.04.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի ապրիլի 21-ի նիստում քննարկեց 2020 թվականի նոյեմբերի 16-ին արտոնագրային հավատարմատար Վանիկ Մարգարյանի կողմից ներկայացված՝ «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ ընկերության (Երևան, Աշտարակի խճղ. 2ա, ԱՄ) «ԼԵՈ» (No20200202) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փոր ձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը հակասում է հասարակական կարգին, մարդասիրության կամ բարոյականության սկզբունքներին, ինչպես նաև անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին: Ազգային և հոգևոր արժեքներ են համարվում նյութական, գիտական, մշակութային արժեքները, ինչպես նաև հոգևոր արժեքները: Արժեք հասկացությամբ նշվում է այն հանգամանքը, որ մարդկային գործունեության մեջ ներգրավված իրականությունը ձեռք է բերում մի նոր հատկանիշ, այն իմաստավորվում է հասարակական-մշակութային և հոգևոր ենթատեքստում և դառնում որոշակի գնահատականների առարկա: Տվյալ դեպքում հայտարկված «ԼԵՈ» նիշը ենթակա չէ գրանցման, քանի որ այն ներառում է հայ ժողովրդի պատմության մեջ նշանակալի և առանձնահատուկ տեղ զբաղեցնող, հայազգի մեծանուն գրող, հայագետ, հայ պատմաբան, գրականագետ, հրապարակախոս, ՀԽՍՀ գիտությունների և արվեստի ինստիտուտի անդամ, պրոֆեսոր «ԼԵՈ»-ի (իրական անունը՝ Առաքել Գրիգորի Բաբախանյան) անունը, հետևաբար՝ մեր

ազգային մտածելակերպին հարիր չէ նրա ազգանունը զետեղել ալկոհոլային խմիչքների վրա: Ինչ վերաբերում է Ձեր կողմից ներկայացված նկատառումներին, այն է՝ «ԼԵՈ անունը ընկալվում է, որպես նորաոճ հատուկ անուն, որը փոխարինում է «Լևոն» անվանը», ապա, տեղեկացնում ենք, որ, նույնիսկ, եթե հայ ժողովրդի պատմության մեջ նշանակալի և առանձնահատուկ տեղ զբաղեցնող, հայազգի մեծանուն գրող, հայագետ, հայ պատմաբան, գրականագետ, հրապարակախոս, ՀԽՍՀ գիտությունների և արվեստի ինստիտուտի անդամ, պրոֆեսոր Առաքել Գրիգորի Բաբախանյանն իր՝ «ԼԵՈ» կեղծանունը փոխառել է այլ պատմավեպից, սակայն, իր բազմաճյուղ գործունեության արդյունքում «ԼԵՈ»-ի անունը մշտապես մեծարվել է հայ ժողովրդի կողմից, Հայաստանի և Արցախի Հանրապետություններում նրա անունով են կոչվել դպրոցներ, մի շարք հասարակական կազմակերպություններ և փողոցներ, ինչը փաստում է մեծ հարգանքի մասին հանդեպ՝ նրա անձը, ուստի, նրա անունը զետեղելը ալկոհոլային խմիչքների վրա, հարիր չէ մեր ազգային մտածելակերպին:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով, որ բողոքարկողը բողոքում ներկայացրել է ապրանքների ցանկի կրճատում խնդրարկելով ապրանքային նշանի գրանցումը հայկական կոնյակ (բրենդի) և գինի ապրանքների համար և հաշվի առնելով Մտավոր սեփականության գործակալության մոտեցումը, որ 10 տարուց ավել հնեցում ունեցող հայկական կոնյակի (բրենդի) և բարձրորակ գինու համար գրանցման ենթակա են նմանատիպ ապրանքային նշանները, բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և նշեց, որ ապրանքային նշանը օգտագործվելու է 10 տարի և ավել հնեցում ունեցող հայկական կոնյակի (բրենդի) և «կանգուն» կամ «արենի» տեսակի խաղողից պատրաստված բարձրորակ գինու համար::

Փորձաքննության բաժնի պետը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի

նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Արտոնագրային հավատարմատար Վանիկ Մարգարյանի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «ԼԵՈ» (No20200202) ապրանքային նշանը գրանցել 33-րդ դասի «10 տարի և ավելի հնեցված սպիրտից պատրաստված հայկական կոնյակ (բրենդի), «կանգուն» կամ «արենի» տեսակի խաղողից պատրաստված բարձրորակ գինի» ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՎԱՐՈՍ ՍԻՄՈՆՅԱՆ